ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ հաճախորդ, Ձեր իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես **դատական** կարգով, այնպես էլ **Ֆինանսական համակարգի հաշտարարի** միջոցով:

Դատարան դիմելու դեպքում Ձեր և “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ միջև ծագած վեճը լուծում է դատարանը: Դուք կարող եք դիմել դատարան բողոքի քննության ցանկացած փուլում: Դատարանի վճիռը չի կարող վերանայվել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից:

Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու դեպքում Ձեր և “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ միջև ծագած վեճը լուծում է Հաշտարարը՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ֆինանսական համակարգի հաշտարարի ծառայություններն **ԱՆՎՃԱՐ** են:

Բողոք ունենալու դեպքում Դուք նախևառաջ պետք է դիմեք “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ:

“ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ-ն պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանել Ձեր բողոքին: 10 օրից պատասխանը ստանալուց հետո կամ, եթե պատասխան չեք ստացել, առանց դրա, Դուք կարող եք դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե `

1. Բողոքը “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ ներկայացնելուց հետո դեռ չի անցել 10 աշխատանքային օր,
2. Դուք չեք պահանջում դրամական կամ այլ գույքային հատուցում, Ձեր կողմից պահանջվող հատուցումը գերազանցում է 10 միլիոն դրամը (կամ դրան համարժեք արտարժույթով գումարը),
3. “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ պատասխանը ստանալուց հետո անցել է ավելի քան վեց ամիս,
4. Ձեր կողմից բողոքարկվող գործողությունը կամ անգործությունը տեղի է ունեցելմինչև 2008թ. օգոստոսի 2-ը:

Զգուշացնում ենք նաև, որ Ֆինանսական համակարգի հաշտարարը չի կարող քննել Ձեր բողոքը, եթե այն քննվում է դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) կողմից կամ արդեն իսկ առկա է այդ բողոքի վերաբերյալ դատարանի (կամ արբիտրաժային տրիբունալի) վճիռը:

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ	
Հաշտարար՝	Փիրուզ Սարգսյան
Գտնվելու վայրը՝	Վ. Սարգսյան 26/1
Հեռ.՝	58.23.22; 58.23.21
Ֆաքս՝	58.24.21
Կայք՝	www.fsm.am

Սիրելի՛ հաճախորդ, հայտնում ենք Ձեզ, որ “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ-ն չի հրաժարվել Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից: Դա նշանակում է, որ “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ-ն կարող է որոշ դեպքերում դատական կարգով վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ-ի դեմ կայացված որոշումները:

Դուք կարող եք նաև բողոքներով դիմել Կենտրոնական բանկ: Տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկն իրավասու չէ լուծել Ձեր և “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ-ի միջև վեճերը, սակայն կարող է “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ-ի նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, եթե պարզվի, որ “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ-ն խախտել է օրենքի պահանջները:

ՀՀ Կենտրոնական բանկ	
Գտնվելու վայրը՝	Վ. Սարգսյան 6
Հեռ.՝	58.38.41
էլ. հասցե	mcba@cba.am
Ֆաքս՝	52.38.52
Կայք՝	www.cba.am

Հարգելի հաճախորդ, հայտնում ենք, որ եթե Ձեր և “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ-ի միջև կնքվել է արբիտրաժային համաձայնություն, դա նշանակում է, որ “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերը ենթակա են լուծման արբիտրաժային տրիբունալի կողմից: Դուք զրկվում եք “ԱՐՄԵՆԲՐՈԿ” ԲԲԸ-ի հետ կնքված պայմանագրից բխող վեճերի կապակցությամբ դատարան դիմելու իրավունքից: Արբիտրաժային տրիբունալի վճիռները, որպես կանոն, դատարանի կողմից վերանայման ենթակա չեն: